

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
մարզային փուլի – 2024-2025 ուս. տարի
/տևողությունը – 120 րոպե/
11-12 դասարան

1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՛ սխալ 2միավոր

- ա. Գետահովտամարզագետնային հողատեսակը ՀՀ տարածքում ունի ազոնալ բաշխում:
- բ. Մարզագետնատափաստանային հողերը սևահողերից հումուսով ավելի հարուստ են, սակայն շերտի հզորությամբ զիջում են:
- գ. Դարչնագույն հողերը բնորոշ են հետանտառային լանդշաֆտներին:
- դ. Լեռնաշագանակագույն հողերը բնորոշ են անտառային լանդշաֆտներին:
- ե. Թռչնաբուծությունը նպաստում է ջերմոցային էֆեկտին:
- զ. Խոշոր եղջերավոր անասնապահությունը զարգանում է հիմնականում չորային տարածքներում:
- է. Մանր եղջերավոր անասնաբուծությունը ձգտում է տեղաբաշխվել խոշոր քաղաքների մոտ:
- ը. Խոզաբուծությունը տեղափաշխվում է անտառային, անտառատափաստանային և տափաստանային զոնաներում և խտաբնակ տարածքներում:

2. Նկարագրով որոշել պետությունը 1միավոր

ԱՍԵԱՆ-ի անդամ այս արշիպելագային երկրում տիրապետող կրոնը քրիստոնեությունն է: Երկիրն իր անունը ստացել է այլ աշխարհամասում գտնվող երկրներից մեկի թագավորի պատվին: Երկիրը հարուստ է բազմաթիվ մետաղներով, որոնցից պալադիումով աշխարհի առաջատարն է:

3. Տնտեսության առաջնային հատվածի ճյուղ չէ՛ 1միավոր

- ա. գյուղատնտեսություն բ. հանքարդյունաբերություն
- գ. անտառտնտեսություն դ. սննդի արդյունաբերություն

4. Ելնելով բնակչության կառուցվածքի տվյալներից՝ պատասխանեք հարցերին և պատասխանները հիմնավորեք (յուրաքանչյուր հիմնավոր ճիշտ պատասխանը 1միավոր)

Երկիր	Տարեթիվ	Երեխաներ (%)	Տարեցներ (%)	Աշխատանքային ռեսուրսներ (%)
Ճապոնիա	1950թ.	35	5	60
	2020թ.	12	29	59
Հարավային Կորեա	1950թ.	43	3	44
	2020թ.	12	16	72
Իսպանիա	1950թ.	27	7	66
	2020թ.	14	20	66

- ա. Ներկայումս ժողովրդագրական ի՞նչ քաղաքականություն է նպատակահարմար վարել նշված երկրներում
- բ. 1950-2020թթ. ո՞ր երկրի տնտեսությունն է առավել մեծ խթան ստացել զարգացման համար
- գ. Ներկայումս ո՞ր երկրի սոցիալական ծառայություններն են ավելի ծանրաբեռնված

5. Խնդիրներ

- ա. 2000 բնակչի համար նախատեսված շենքի կառուցապատողը դիմել է ջրօգտագործման թույլտվության: Մոտակայքում գտնվող աղբյուրի ջրի ծախսը 0.01մ³/վրկ է: Արդյոք այդ աղբյուրը բավարար է շենքի ջրամատակարարման համար, եթե մեկ մարդու ջրամատակարարման նորմը 300լ/օր է: Հիմնավորել հաշվարկով (չհիմնավորելու դեպքում միավոր չի տրվում) 1միավոր
- բ. Քաղաքային տրանսպորտից տարեկան օգտվում է 40մլն ուղևոր՝ միջինում տեղափոխվելով 3կմ: Ընդ որում, վերգետնյա տրանսպորտից օգտվում է 30մլն մարդ՝ միջինում տեղափոխվելով 2կմ: Որքա՞ն է ստորգետնյա տրանսպորտի ուղևորաշրջանառությունը քաղաքում 1միավոր

6. Թվարկել

ա. Եվրամիության անդամ ներգամաքային դիրք ունեցող 4 երկիր 1միավոր

բ. Հայկական լեռնաշխարհի 4000մ-ից բարձր չորս լեռնագագաթ 1միավոր

7. Դասավորել նշված ջրաէլեկտրակայաններն ըստ հզորության աճող հաջորդականության՝ Իտայաու, Բրատսկի, Երեք Կիրճեր, Գրանդ Կուլի 1միավոր


8. Բացատրել

ա. Որո՞նք են ՀՀ մեծ կենսաբազմազանության պատճառները (ներկայացնել երեքը): 1միավոր

բ. Վերջին տասնամյակում, չնայած տնտեսության անշեղորեն զարգացմանը, Չինաստանում բազմաթիվ քաղաքներում գրանցվում է օդի որակի շարունակական բարելավում: Ներկայացրեք այդ երևույթը բացատրող երկու հիմնավոր պատճառ: 1միավոր

9. Դիտարկեք միտումը և պատասխանեք հարցերին

Ներկայացված է 1977-2024թթ. ժամանակահատվածում տարբեր ֆրեոն գազերի փոփոխության միտումը:





ա. Ի՞նչ կիրառություն ունեն ֆրեոն գազերը (0.5միավոր) և ի՞նչ ռիսկեր են դրանք պարունակում միջավայրի համար (0.5միավոր)

բ. Ելնելով ներկայացված չորս տեսակների կորերից՝ ինչպիսի՞ն է ֆրեոն գազերի կոնցենտրացիայի ընդհանուր միտումը 2000թ.-ից հետո (0.5միավոր): Ինչպե՞ս կարելի է նվազեցնել ֆրեոնի արտանետումները (0.5միավոր):


10. Բացատրել հասկացությունը և պատասխանել հարակից հարցերին

Ի՞նչ է ռեսուրսների ազգայնացումը (0.25միավոր): Ո՞ր մայրցամաքում է վերջին տասնամյակներին այն առավել հաճախ կիրառվում (0.25միավոր): Ի՞նչ նպատակ է հետապնդում ռեսուրսների ազգայնացումը (0.5միավոր): Ի՞նչ երկու բացասական հետևանքների կարող է հանգեցնել ռեսուրսների ազգայնացումը:


11. Երկրների մարդատար ավտոմոբիլների արտադրության (հզ. հատ) տրամագրերը համապատասխանեցնել քարտեզում նշված երկրներին (օր. Ա-5) 2 միավոր




Ա



Բ



Գ



Դ

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ.Ասատրյան